Աննա Սարգսյան

Վերածնունդ

Լսու՞մ ես արդյոք զարկը սրտիս.
հոգուս գողտրիկ անկյուններում
պատսպարված կիրքն է հառել,
ու անվստահ, մանկան քայլով,
փոքր ինչ դանդաղ, երերալով
մղվում է դեպ ազատություն,
սիրուն՝ ձեռքով բարեւ տալով,
ոնց վաղեմի իր մտերմին,
ում չէր տեսել հազա՛ր տարով:
Թեև մի քիչ օտարացած,
բայց հարազատ մի մղումով,
գիրկն է առել, կարոտ դառել՝
այն մարելու մեծ ձգտումով,
ծածուկ, մտքում իր դավանել՝
պահն այդ հոսում է ճիշտ առվով,
էլ ի՞նչ խղճով նրան վանել,
լոկ փայփայե'լ՝ ամեն գնով:
Ու թեև այն սնդիկի պես
անկայուն է, անորսալի,
մերթ կարկաչուն գետակի պես
հորդում է ներս՝ հոգուց անդին,
մերթ մշուշի թևին թառած՝
երկինք հառնում, անէանում,

բայց խոստումն իր նա պահում է,
վեհանալով՝ ետ է դառնում...
15.03.2024թ.
Դիլիջան